

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՐԻՊԻ ԴԵՍ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Tdap - (Փայտացում (պրկախտ), դիֆթերիա, կապույտ հազ) պատվաստանյութ: *Ի՞նչ է անհրաժեշտ իմանալ:*

Պատվաստանյութերի մասին շատ տեղեկատվական ձեռնարկներ հասանելի են իսպաներեն և այլ լեզուներով: Տես՝ www.immunize.org/vis:
Hojas de información sobre vacunas están disponibles en español y en muchos otros idiomas. Visite www.immunize.org/vis

1. Ինչու՞ պատվաստվել:

Tdap պատվաստանյութը կարող է կանխել **պրկախտը, դիֆթերիան և կապույտ հազը:**

Դիֆթերիան և կապույտ հազը փոխանցվում են մարդուց մարդուն: Պրկախտը թափանցում է օրգանիզմ արտաքին կտրվածքների և վերքերի միջոցով:

- **ՊՐԿԱՍԽՏ (Պ)** առաջացնում է ցավոտ մկանային լարվածություն: Պրկախտը կարող է հանգեցնել լուրջ առողջական խնդիրների, այդ թվում՝ բերանը բացելու անկարողության, կուլ տալու և շնչելու հետ կապված խնդիրների կամ մահվան:
- **ԴԻՖԹԵՐԻԱ (Դ)** կարող է հանգեցնել դժվարացած շնչառության, սրտի անբավարարության, կաթվածի կամ մահվան:
- **ԿԱՊՈՒԹՅԱՆ ՀԱԶ (ԿՀ)**, կարող է առաջացնել անվերահսկելի, ուժեղ հազ, որի պատճառով դժվար է շնչել, ուտել կամ խմել: Կապույտ հազը կարող է չափազանց լուրջ ընթացք ստանալ, հատկապես նորածինների և փոքր երեխաների մոտ՝ առաջացնելով թոքաբորբ, ցնցումներ, գլխաղեղի ախտահարում կամ մահ: Դեռահասների և մեծահասակների մոտ դա կարող է հանգեցնել քաշի կորստի, միզապարկի վերահսկողության կորստի, գիտակցության կորստի, և հազի պատճառով կողոսկրների կոտրվածքների:

2. Tdap պատվաստանյութ

Tdap-ը նախատեսված է միայն 7 տարեկանից բարձր երեխաների, դեռահասների և մեծահասակների համար:

Դեռահասները պետք է ստանան Tdap-ի մեկ դեղաչափը, ցանկալի է 11 կամ 12 տարեկան հասակում:

Հղիները պետք է ստանան Tdap դեղաչափը յուրաքանչյուր հղիության ընթացքում, ցանկալի է երրորդ եռամսյակի սկզբում՝ նորածնին կապույտ հազից պաշտպանելու նպատակով: Նորածինները կյանքին սպառնացող լուրջ բարդությունների առաջացման պատճառով համարվում են կապույտ հազի առավելագույն ռիսկային խումբ:

Մեծահասակները, ովքեր երբեք չեն ստացել Tdap պատվաստանյութը, պետք է ստանան դրա 1 դեղաչափը:

Բացի այդ, **մեծահասակները պետք է ստանան Tdap-ի կամ Td-ի** (մեկ այլ պատվաստանյութ, որը պաշտպանում է պրկախտից և դիֆթերիայից, բայց ոչ կապույտ հազից) **բուստեր դրան յուրաքանչյուր 10 տարի**, կամ 5 տարի հետո՝ ծանր կամ աղտոտված վերքի կամ այրվածքի դեպքում:

Tdap պատվաստանյութը կարող է կիրառվել այլ պատվաստանյութերի հետ զուգահեռ:

3. Քննարկեք Ձեր բժշկի հետ

Հարկավոր է զգուշացնել պատվաստում իրականացնողին պատվաստում ստացողի հետևյալ խնդիրների մասին

- Պատվաստվողը **ալերգիկ ռեակցիա է ունեցել** պրկախտից, դիֆթերիայից, կապույտ հազից պաշտպանող որևէ պատվաստանյութի նախորդ դեղաչափից հետո, կամ ունի որևէ **լուրջ, կյանքին սպառնացող ալերգիկ ռեակցիաներ:**
- Ընկել է **կոմայի մեջ, ունեցել է գիտակցության մակարդակի նվազեցում կամ երկարատև ցնցումներ նախորդ դրոզայից 7 օր հետո** (DTP, DTaP, կամ Tdap):
- Ունի **ցնցումներ կամ նյարդային համակարգի հետ կապված այլ խնդիրներ:**
- Երբևէ ունեցել է **Գիլլեն-Քարրեի համախտանիշ** (կոչվում է նաև “GBS”):
- Զգացել է **ուժեղ ցավ կամ այտուցվածություն պրկախտի կամ դիֆթերիայի դեմ ցանկացած պատվաստանյութի նախորդ դեղաչափից հետո:**

Որոշ դեպքերում Ձեր բուժող բժիշկը կարող է որոշել հետաձգել Tdap պատվաստումը մինչև հաջորդ այցը:

Թեթև հիվանդություններով, ինչպիսին է մրսածությունը, մարդիկ կարող են պատվաստվել: Միջին կամ ծանր հիվանդություններ ունեցող մարդիկ Tdap պատվաստում ստանալու համար պետք է սպասեն ապաքինմանը:

Ավելի մանրամասն տեղեկությունների համար կարող եք դիմել Ձեր բժիշկին:



4. Պատվաստանյութի ազդեցության ռիսկերը

- Tdap պատվաստումից հետո հնարավոր է ցավ, կարմրություն կամ այտուց ներարկման տեղում, թեթև ջերմություն, գլխացավ, հոգնածության զգացում, ինչպես նաև սրտխառնոց, փսխում, փորլուծություն կամ որովայնային ցավ:

Բժշկական միջամտություններից, այդ թվում նաև պատվաստումներից հետո, հնարավոր է ուշաթափություն: Տեղեկացրեք Ձեր բժշկին, եթե ունեք գլխապտույտ, տեսողական փոփոխություններ և զնգոց ականջներում:

Ինչպես ցանկացած դեղամիջոցի դեպքում, կա շատ փոքր հավանականություն, որ պատվաստանյութը կհանգեցնի ծանր պերզիկ ռեակցիայի, այլ լուրջ վնասների կամ մահվան:

5. Ի՞նչ անել, եթե լուրջ խնդիր է առաջացել:

Ալերգիկ ռեակցիա կարող է առաջանալ պատվաստված անձի կլինիկական լքելուց հետո: Եթե նկատել եք ծանր պերզիկ ռեակցիայի նշաններ (եղնջացան, դեմքի և կոկորդի այտուցվածություն, դժվարացած շնչառություն, հաճախացած սրտխփոց, գլխապտույտ կամ թուլություն), հարկավոր է զանգահարել **9-1-1** և սուժամիժն տանել մոտակա հիվանդանոց:

Մտահոգիչ այլ նշանները հարկավոր է քննարկել բժշկի հետ:

Պատվաստանյութերի արդյունքում առաջացած անցանկալի ռեակցիաների մասին հարկավոր է տեղեկացնել պատվաստումների անցանկալի երևույթների մասին հաշվետվության համակարգին (VAERS): Մովորաբար այս զեկույցը ներկայացնում է Ձեր բժիշկը կամ կարող եք դա անել ինքներդ: Այցելեք VAERS-ի կայքէջ www.vaers.hhs.gov կամ զանգահարեք **1-800-822-7967** հեռախոսահամարով: *VAERS-ը նախատեսված է բացառապես անցանկալի ռեակցիաների զեկուցման համար է, և VAERS-ի աշխատակազմը բժշկական խորհուրդներ չի տրամադրում:*

Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն:

6. Պատվաստումների վնասի խոփհատուցման ազգային ծրագիրը

Պատվաստումների արդյունքում առաջացած վնասի փոխհատուցման ազգային ծրագիրը (VICP) դաշնային ծրագիր է, որը ստեղծվել է որոշակի պատվաստումներից տուժած մարդկանց վնասի փոխհատուցման համար: Պատվաստումներից ենթադրյալ վնասների կամ մահվան արդյունքում առաջացած պահանջները ունեն ներկայացման ժամկետ, որը կարող է նույնիսկ լինել ընդամենը երկու տարի: Այցելեք VICP կայքը www.hrsa.gov/vaccinecompensation կամ զանգահարեք **1-800-338-2382** հեռախոսահամարով՝ ծրագրի մասին տեղեկանալու և հայց ներկայացնելու համար:

7. Ինչպե՞ս ստանալ լրացուցիչ տեղեկություն:

- Զրուցեք Ձեր բժշկի հետ:
- Զանգահարեք Ձեր տեղամասային կամ նահանգային առողջապահական վարչություն:
- Պատվաստանյութի փաթեթավորման ներդիրները և այլ լրացուցիչ տեղեկություններ հասանելի են Մենդի և դեղերի վարչության (FDA) կայքում հետևյալ հղումով՝ www.fda.gov/vaccines-blood-biologics/vaccines:
- Դիմեք Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոններ (CDC):
 - Զանգահարեք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** կամ
 - այցելեք CDC-ի կայք հետևյալ հղումով՝ <http://www.cdc.gov/vaccines>:

DCH-1281A

AUTH: P. H. S., Act 42, Sect. 2126.

Armenian translation of Tdap VIS provided by California Department of Public Health, Immunization Program

Տեղեկատվություն պատվաստանյութի վերաբերյալ
Tdap (Փայտացում (պրկախտ), դիֆթերիա, կապույտ հազ)
պատվաստանյութ

42 U.S.C. § 300aa-26
8/6/2021

OFFICE
USE
ONLY

